շարժառիթը մեծ մասամբ լինում է ծնողների անհամաձայնութիւնն աղջկայ ամուսնութեան հարցում։ Երբեմն էլ պատահում է, որ այդ շարժառիթը — աղջկայ հօր անհամաձայնութիւնն է լինում. այս դէպքում աղջկայ մայրը դառնում է առևանդման մասնակից։ Երիտասարդը նախօրօք պայմանաւորուելով փախուստի վերաբերմամբ աղջկայ հետ, սատանում է սրանից մատանի կամ մի որևէ թանգագին բան իբրև գրաւական։ Առևանդողը գալիս է իւր ընկերներով (մօտաւորապէս 10 հոգի), բոլորը զինուած։ Մօտենալով աղջկայ տանը և յարմար ժամանակ ընտրելով, յարձակումն է գործում երթիկից ի վայր, յափշտակում աղջկան և հեծնելով ձին, փախչում է ընկերների օգնութեամբ։ Առևանդողը փախցնում է աղջկան սովորաբար որևէ հարևան գիւղ, իւր ընկերոջ մօտ և այնտեղ կիշերը պարկում նրա հետ։ Այնուհետև երիտասարդն ու աղջիկը շտապում են ծածկել իրենց վարմունքը եկեղեցական պրսակով, որ տեղի է ունենում 2—3 օրից յետոյ, ամենաուշ մի շաբաթից յետոյ, եթէ ի հարկէ եկեղեցու կողմից ոչ մի արգելք չի լինում։ Հակառակ դէպքում նոքա ապրում են ապօրինի կենակցութեամբ» [1])։

Ախալքալաքի գաւառում դեռ ևս պահպանում է աղջիկ փախցնելու սովորութիւնն և սրա գլխաւոր շարժառիթը համարւում է «հաղեմասին» [2])։

Վարանդայում «դեռ մինչև այսօր էլ յաճախ պատահում է, երբ մի երիտասարդի մերժում են տալ իւր սիրած աղջիկը, որի պատճառը սովորաբար երիտասարդի ստոր դերդաստանից, կամ ապքատ լինելն է լինում, վերջինս հաւաքելով իւր մի քանի մտերիմ ընկերները՝ փախցնում է աղջկան։ Շատ անգամ առնելով աղջկայ համաձայնութիւնը, և ժամադիր լինելով նրա հետ, երիտասարդը ձիու գաւակն է

[1]) „Этнографическое Обозрѣніе“ 1889 г. № 1—Свадебные обряды у ахалцыхскихъ армянъ.

[2]) «Ազգագրական Հանդէս» գիրք Ա. 1896 թ. Ջաւախք՝ Ե. Լալայեանի։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան